Հաստատված է՝ ______________

Հայկական բժշկական ինստիտուտի

գիտական խորհրդի 2017 թվականի

օգոստոսի 29-ի նիստում

ռեկտոր Մուշեղ Աստաբացյան

______________________

(ստորագրություն)

# ՀԲԻ-Ի ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

(վերահաստատված)

Հաստատված է` ____________

Հայկական բժշկական ինստիտուտի

գիտական խորհրդի 2017 թվականի

օգոստոսի 29-ի նիստում

ռեկտոր Մուշեղ Աստաբացյան

________________________

(ստորագրություն)

## ՀԲԻ-Ի ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ

## ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Շրջանավարտը կարող է բողոքարկել ամփոփիչ ատեստավորման, գնահատականը ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի, կամ առարկայական հանձնաժողովի նախագահին, արդյունքները հրապարակելուց հետո 1 ժամվա ընթացքում:
2. Գրավոր բողոքը ներկայացվում է հանձնաժողովի նախագահին, որի քննարկումը կազմակերպվում է նույն օրը:
3. Գրավոր բողոքի քննարկանը մասնակցում են հաստատության վարչական անձնակազմի, տվյալ հանձնաժողովի անդամ չհանդիսացող աշխատակից և հաստատության ուսումնական խորհրդի ներկայացուցիչը, որոնց թեկնածությունները նախապես հաստատվում են հաստատության ղեկավարի կողմից:
4. Շրջանավարտի ներկայությամբ լսվում է պատասխանի ձայնագրությունը: Բողոքարկման արդյունքում բաց քվեարկությամբ, հանձնաժողովների անդամների ձայների պարզ մեծամասնությամբ կայացվում է որոշում`
   ա) գնահատականը թողնել անփոփոխ,
   բ) գնահատականը բարձրացնել
5. Ընդունած որոշման վերաբերյալ կազմվում է արձանագրություն, որը ստորագրվում է հանձնաժողովի նախագահի հաստատության վարչական անձնակազմի, ուսանողական խորհրդի ներկայացուցիչների և շրջանավարտի կողմից:
6. Կայացված որոշման անհամաձայնություն հայտնելու դեպքում գրավոր ներկայացվում է հատուկ կարծիք, որը կցվում է արձանագրությանը:
7. Գնահատականի փոփոխման դեպքում արձանագրությունների հատուկ մատյանում կատարվում է համապատասխան գրառում: